Բաց նամակ Կորպաչովին

ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄ-Ի ԳԼԽԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԸՆԿ. Մ.Ա. ԿՈՐՊԱՉՈՎԻՆ

Ցարգելի Միխայիլ Սերգէեւիչ

Լեռնային Ղարաբաղում վերստին սրուած իրադրութեան կապակցութեամբ մենք ստիպուած ենք հերթական անգամ դիմել ձեզ, յուսալով թէ կ'ըմբռնէք եւ սատար կը լինէք մեզ:

Ձեր ելոյթներում դուք բազմիցս նկատել էք, որ Ատրպէյճանի նախկին ղեկավարութիւնը տասնամեակներ շարունակ, վարել է մարզի հայ ազգաբնակչութեան ազգային արժանապատուութիւնը ոտնահատող խտրականութեան քաղաքականութիւն, որպիսին իր արտացոլումն է գտել նաեւ կուսակցութեան եւ կառավարութեան ընդունող որոշումների մէջ: Վերջին ժամանակների իրադարձութիւնները, թւում է, պէտք է այն բանին երաշխիք լինէին, թէ ԼՂԻՄի նկատմամբ նմանօրինակ քաղաքականութեանը մէկընդմիշտ վերջ է տրուած: Մարզի բնակչութիւնը ըմբռնումով ընդունեց Ատրպէյճանի վարչական ենթակայութիւնից ինքնավար մարզը հանելու, մարզում կառավարման յատուկ ձեւ մտցնելու կոմպրոմիսային քայլի ամբողջ նշանակութիւնը: Ցաւօք, մենք հարկադրուած ենք փաստելու, որ ԼՂԻՄի հայ բնակչութեան յոյսերը չարդարացան: ԼՂԻՄը առաջուան պէս մնում է կռուախնձոր: Նոյնիսկ կառավարման յատուկ ձեւ մտցնելը մարզին չփրկեց Ատրպէյճանի կոպիտ, անպարկեշտ միջամտութիւնից: Աւելին, այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, է Յատուկ Կառավարման Կոմիտէն կանգնել է մարզը ինտենսիւ ատրպէյճանականացնելու՝ հանրապետութեան ղեկավարութեանը օժանդակելու դիրքերի վրայ:

ԼՂԻՄի սոցիալ-տնտեսական զարգացման մասին ընդունուած որոշումներին որպէս հակակշիռ՝ տեղի են ունենում միջոցների նպատակային յատկացումներ եւ ատրպէյճանական գիւղերի արագօրէն բարեկարգման աշխատանքներ: Այդ գիւղերում աշխատանքներ են կատարւում արդիւնաբերական եւ սոցիալական նշանակութիւն ունեցող օբիեկտների, ճանապարհների, բնակարանների շինարարութեան ուղղութեամբ: Եւ եթէ նկատի ունենանք որ ոչ մի հայկական գիւղում, ոչ մի նմանօրինակ աշխատանք չի կատարւում, ապա հասկանալի կը լինի մարզի հայ բնակչութեան սոցիալական ու ազգային ոտնահարուող զգացումները:

Մենք շարունակում ենք համարել այնպէս, որ կառավարման յատուկ ձեւը չպէտք է իրենով փոխարինի տեղական կուսակցական ու խորհրդային մարմինների ստրուկտուրան: Այլ՝ պէտք է վեր կանգնած լինի այդ մարմիններից, փոխարինելով հանրապետական ղեկավարութեանը, որը կատարելապէս վարկաբեկել ու շարունակում է վարկաբեկել իրեն՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր կեցուածքով:

Մենք խորապէս համոզուած ենք, որ հայ ժողովուրդին հասած ողբերգութիւնը չի կարող օգտագործուել ԼՂԻՄի պրոբլեմները մոռացութեան տալու համար: Նմանօրինակ մօտեցում ոչ միայն բարոյական չէ, այլեւ յղի է չնախատեսուող հետեւանքներով:

Չնայած ձեր այն յայտարարութիւններին, թէ ազգամիջեան պրոբլեմները կարող են եւ պէտք է իրենց լուծումներն ստանան վերակառուցման գործընթացում, Ատրպէյճանի Կոմկուսի Կենտկոմի ղեկավար Ա. Խ. Վեզիրովը հրապարակայնօրէն բազմիցս յայտարարել է, թէ ԼՂԻՄի բրոպլեմը լուծուած է վերջնականապէս ու անվերապահօրէն: Ընդ որում, նա իր յայտարարութիւններ հիմնաւորում է անձամբ ձեզ հետ ունեցած յաճախակի հանդիպումներով ու զրոյցներով: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը վրդովուած է Վեզիրովի սադրիչ յայտարարութիւններից եւ ԽՄԿԿ Կենտկոմի՝ Հանրապետութեան նկատմամբ ունեցած բարեացակամ վերաբերմունքից:

Տարակուսանք է պատճառում նաեւ այն, որ մինչեւ օրս չի տրուած սումգայիթեան ջարդերի քաղաքական գնահատականը: Երկրի հասարակայնութիւնը անտեղեակ է Բաքու քաղաքում հակասովետական լոզունգներով չարտօնուած միթինկներից, որոնք տեղի են ունենում յատուկ դրութեան պայմաններում: Իրադրութեան նորմալացմանը չի նպաստում նաեւ «Ղարաբաղ» Կոմիտէի անդամների ձերբակալութիւնը:

Մենք, արտայայտելով Լեռնային Ղարաբաղի բնակչութեան գերակշռող մեծամասնութեան կամքն ու իղձերը, պնդում ենք Ատրպէյճանական ԽՍՀի վարչական ենթակայութիւնից ԼՂԻՄը անյապաղօրէն ու իրականում դուրս բերելու անհրաժեշտութիւնը: Առաւել նիշդ եւ արդարամիտ որոշումը կը լինէր եւ մնում է որպէս այդպիսին, ԼՂԻՄը Հայաստանին միացնելը:

Ցարգելի Միխայիլ Սերգէեւիչ,

Մենք մեր պարտքն ենք համարում ծայրագոյն անկեղծ լինել ձեզ հետ: Լեռնային Ղարաբաղում իրադարձութիւնների զարգացման դինամիկան մեզ համոզում է, որ դրանք ապառնում են դառնալ հերթական կարգադրութիւններ, ընդհուպ՝ էտնիկական խմբերի միջեւ նոր ընդհարումներ: Անհրաժեշտ է ամէն բան, որպէսզի թոյլ չտրուի այդ: Ստեղծուած պայմաններում, անհրաժեշտ ենք համարում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների խմբի հանդիպումը ձեզ հետ, ճգնաժամային իրավիճակից դուրս գալու ուղիներ որոնելու նպատակով:

Կուսակցութեան Մարտակերտի Շրջկոմի Առաջին Քարտուղար, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Ս. Գաբրիէլեան

Կուսակցութեան Մարտունու Շրջկոմի Առաջին Քարտուղար ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Վ. Գրիգորեան

Ստեփանակերտի «ՊԱՏՕ»ի գլխաւոր դիրեկտոր, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Բ. Տատամեան

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Հ. Պողոսեան

ԼՂԻՄի Յատուկ Կառավարման Կոմիտէի անդամ Ս. Բաբայեան

ԼՂԻՄի Յատուկ Կառավարման Կոմիտէի անդամ Վ. Թովմասեան

Կուսակցութեան Ստեփանակերտի Շրջկոմի առաջին Քարտուղար Վ. Ապաջանեան

Կուսակցութեան Ասկերանի Շրջկոմի Առաջին Քարտուղար Վ. Քոչարեան

Հայաստանի Կառավարութեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ցարգելի ընկերներ,

Ցաւն ու երկիւղը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան ճակատագրի համար թելադրում են կրկին Հայկական ԽՍՀ Կուսակցական ու պետական ղեկավար մարմիններին, Մայր Հայաստանի ժողովրդին դիմելու անհրաժեշտութիւնը:

Վերջին ժամանակների իրադարձութիւնները մեզ համոզում են, որ Լեռնային Ղարաբաղի փրոպլեմը փորձում են բոլոր արդար եւ անարդար միջոցներով փակուղի մտցնել: Այն յոյսերը, որ մենք կապում էինք ԼՂԻՄի Յատուկ Կառավարման Կոմիտէի գործունէութեան հետ, ցաւօք չարդարացան: Կոմիտէի երկակի խաղը, ի սկզբանէ ձախողման էր դատապարտուած: Ատրպէյճանի ղեկավարութիւնը կոպտօրէն ու առանց քաշուելու միջամտում է Լեռնային Ղարաբաղի գործերին, լկտիաբար, մէկը միւսի յետեւից ապօրինի գործողութիւններ ձեռնարկում, չնայած քաղաքային ու շրջանային կուսակցական ու սովետական մարմինների բողոքներին, ըստ որում, այդ ամէնը կատարւում է Յատուկ Կառավարման Կոմիտէի լուռ համաձայնութեամբ:

Մկզբում Լեռնային Ղարաբաղի քաղաքական փրոպլեմը յանգեցուց մարզի սոցիալ – տնտեսական վերափոխութիւններին: Այժմ էլ պարզւում է, որ մարզի սոցիալ-տնտեսական վերափոխութիւնը դա լոկ ատըրպէյճանական գիւղերի սոցիալ-տնտեսական վերափոխութիւն է, մարզի ինտենսիւ ատրպէյճանականացումը:

Ստեղծուած իրադրութիւնում մենք ցաւօք զրկուած ենք Մայր Հայաստանի օգնութիւնից՝ եւ բարոյական եւ նիւթական: Միթէ՞ Հայաստանի օգնութիւնը Լեռնային Ղարաբաղին, սա միայն եղակի համերգների կազմակերպում է, կամ առանձին կօօպերատիւների բացումը: Այն դէպքում, երբ միութենական բոլոր մարմինների կողմից ԼՂԻՄի վերաբերեալ ընդունուած որոշումներում որոշակի պարտականութիւններ են դրուած նաեւ Հայաստանի ԽՍՀի վրայ: Այդ նոյն ժամանակ Ստեփանակերտի շուրջը աներեւակայելի արագութեամբ ամրապնդւում են ատրպէյճանական բնակավայրերը, զարգացւում են նրանց միջեւ ճանապարհների ցանցը: Դժուար չէ հաւանաբար հասկանալ, թէ ինչպիսի հեռու գնացող նպատակներով է այդ ամէնը արւում: Եւ կրկին, այս էլ արդէն քանիերորդ անգամ, փոքրիկ Արցախը իր պայքարում մեն-մենակ է մնում Ատրպէյճանի դէմ: Մենք համոզուած ենք, որ Հայաստանի ժողովուրդը, հանրապետութեան ղեկավարութեան մեղքով՝ անտեղեակ է Լեռնային Ղարաբաղում գործերի իրական վիճակից: Հակառակ դէպքում, հազիւ թէ մենք մեն մենակ մնայինք, առանց օգնութեան ու պաշտպանութեան: Մենք գիտակցում ենք, թէ ինչպիսի դժուարին փրոպլեմներ են կանգնած Հայաստանի ղեկավարութեան ու ժողովրդի առաջ, աւերիչ երկրաշարժի կապակցութեամբ: Եւ այնուամենայնիւ, Լեռնային Ղարաբաղի հայազգի բնակչութեան անունից դիմելով ձեզ, թախանձագին խնդրում ենք, օգտագործելով միութենական հանրապետութեան սուվերէն իրաւունքները, կասեցնել ԼՂԻՄի նկատմամբ Ատրպէյճանի անօրէն գործողութիւնները, ամենաեռանդագին միջոցները ձեռնարկել ուղղուած Ղարանաղեան փրոպլեմի արդարացի լուծմանը:

Խաղաքարտի վրայ է դրուած մեր ժողովրդի ճակատագիրը: Գուցէ վաղը ուշ լինի: Դրա պերճախօս վկայութիւնն է Նախիջեւանը եւ թող հայ ազգի իւրաքանչիւր ներկայացուցիչ իր ընտրութիւնը կատարի այս վճռական եւ կրիտիկական ժամին:

Ստորագրողներ՝

Մարտակերտի Շրջկոմի առաջին քարտուղար, Սովետական Միութեան դեպուտատ *Ս. Գաբրիէլեան:*

Մարտունիի Շրջանի Շրջկոմի Քարտուղար, Սովետական Միութեան ժողովրդական դեպուտատ *Վ. Գրիգորեան:*

Ստեփանակերտի ՊԱՏՕ «Ակրոպրոմ» գլխաւոր դիրեկտոր, մարզի տրանսպորտի կառավարիչ, *Վ. Տատամեան:*

Սովետական Միութեան ժողովրդական Դեպուտատ *Հենրիկ Պողոսեան:*

Լեռնային Ղարաբաղի Յատուկ Կառավարման Կոմիտէի անդամ *Ս. Պապայեան:*

Լեռնային Ղարաբաղի Յատուկ Կառավարման Կոմիտէի անդամ *Լ. Թովմասեան:*

Ստեփանակերտի կուսակցութեան Քաղկոմի առաջին Քարտուղար *Ը. Ապաջանեան:*

Ասկերանի Շրջկոմի Առաջին Քարտուղար *Վ. Քոչարեան:*

Հադրութի Շրջկոմի Առաջին Քարտուղար *Կ. Բաղեան:*

Ստեփանակերտի Գործկոմի նախագահ *Ն. Միրզոյեան:*

Մարդակերտի շրջսովետի նախագահ *Վ. Ջաւատեան:*

Մարտունիի Շրջսովետի նախագահ *Ս. Սէյրանեան:*

Հադրութի Շրջսովետի նախագահ *Է. Նաւասարդեան:*

Ասկերանի Շրջսովետի նախագահի պաշտօնատար *Ա. Աղապապեան:*

(Արցախի նոյն այս ղեկավարներու ստորագրութեամբ դիմում մը ղրկուած է Խորհրդային Միութեան նախագահ Միխայիլ Կորպաչովին որ տրուած է քովի սիւնակներով):

Կուսակցութեան Հադրութի Շրջկոմի Առաջին Քարտուղար Գ. Բաղիեան
Ստեփանակերտի Քաղգործկոմի նախագահ Մ. Միրզոյեան
Մարդակերտի Շրջգործկոմի նախագահ Վ. Ջաւատեան
Մարտունու Շրջգործկոմի նախագահ Է. Նաւասարդեան
Ասկերանի Շրջգործկոմի նախագահի պաշտօնակատար Ա. Աղապապեան:

Մայիսի 3, 1989

Հրատարակուած՝ «Խորհրդային Ղարաբաղ» ռուսերէն թերթի Մայիսի 5, 1989ի համարին մէջ. հայացուած՝ ռուսերէնէ: